



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 92072 գործարքներ, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 30.2%-ով, որը հիմնականում պայմանավորվել է 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի օրինականացման գործընթացի ակտիվացմամբ, մասնավորապես ինքնակամ կառուցված 16085 միավոր շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ:

2005թ. 9 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:



2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 30812 օտարման գործարքների 88.2%-ը կազմել են առուվաճառքները, 11.2%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 39.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում իսկ 40.7%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 5.3%-ով: 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10268 առուվաճառքի գործարքների 65.7%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.2%-ով:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		հունվար-սեպտեմբեր 2005թ.	հունվար-սեպտեմբեր 2004թ.
Կենտրոն	172100.0-440800.0	276600.0	245300.0
Արաբկիր	122900.0-318100.0	226400.0	191600.0
Քանաքեռ-Զեյթուն	63900.0-227200.0	138500.0	118200.0
Նոր-Նորք	56500.0-190800.0	129100.0	99400.0
Ավան	59000.0-159000.0	118900.0	94800.0
Էրեբունի	59000.0-181800.0	113900.0	95900.0
Շենգավիթ	59000.0-204500.0	137400.0	108100.0
Դավթաշեն	63900.0-204500.0	141000.0	119400.0
Աջափնյակ	59000.0-204500.1	133400.0	107500.0
Մալաթիա-Սեբաստիա	59000.0-204500.2	129500.0	106800.0
Նուբարաշեն	36900.0-113600.0	63800.0	41700.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	36900.0-440800.0	146300.0	120800.0

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 21.1%:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3650 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 12.6%-ով:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-սեպտեմբեր 2005թ.	հունվար-սեպտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	39300.0-72700.0	43100.0	34900.0
	Ապարան	14800.0-27300.0	20200.0	17600.0
	Թալին	12300.0-25000.0	18800.0	16000.0
Արարատ	Արտաշատ	27000.0-50000.0	33800.0	30400.0
	Մասիս	39300.0-68200.0	39900.0	31800.0
	Վեդի	24600.0-45400.0	24000.0	20700.0
Արմավիր	Արարատ	22100.0-45400.0	26900.0	19800.0
	Վաղարշապատ	54100.0-95400.0	65500.0	49100.0
	Արմավիր	29500.0-59100.0	39100.0	28900.0
Գեղարքունիք	Մեծամոր	19700.0-36400.0	20200.0	17400.0
	Սևան	19700.0-40900.0	23000.0	17900.0
	Գավառ	9800.0-29500.0	18400.0	17700.0
	Մարտունի	9800.0-68200.0	24400.0	17900.0
	Վարդենիս	4900.0-25000.0	12500.0	9500.0
Լոռի	Ճամբարակ	6400.0-20400.0	9200.0	9700.0
	Վանաձոր	14800.0-47700.0	35400.0	33900.0
	Ստեփանավան	9800.0-29500.0	20000.0	19000.0
	Սպիտակ	14800.0-45400.0	23400.0	17800.0
	Ալավերդի	7400.0-22700.0	15000.0	14100.0
	Տաշիր	7400.0-25000.0	16700.0	12400.0
	Թումանյան	4100.0-11400.0	5100.0	5000.0
	Շամլուղ	2300.0-8400.0	2800.0	2800.0
Կոտայք	Ախթալա	6800.0-16100.0	10400.0	10300.0
	Աբովյան	22100.0-90900.0	65700.0	49000.0
	Նոր Հաճն	24600.0-63600.0	46000.0	32400.0
	Բյուրեղավան	14800.0-50000.0	30000.0	21500.0
	Եղվարդ	17200.0-59100.0	37700.0	24500.0
	Հրազդան	14800.0-40900.0	26400.0	19600.0
	Ծաղկաձոր	19700.0-68200.0	50000.0	43400.0
Շիրակ	Զարենցավան	14800.0-38600.0	28200.0	19600.0
	Գյումրի	19700.0-54500.0	38700.0	39800.0
	Արթիկ	9800.0-31800.0	19900.0	15500.0
Սյունիք	Մարալիկ	8900.0-31800.0	16800.0	14300.0
	Գորիս	12300.0-59100.0	32200.0	18400.0
	Կապան	9800.0-36400.0	24600.0	17600.0
	Միսիան	9800.0-40900.0	22600.0	17400.0
	Մեղրի	8900.0-34100.0	17500.0	13800.0
	Ագարակ	8900.0-27300.0	15000.0	13700.0
	Քաջարան	6400.0-22700.0	12800.0	10400.0

	Դաստակերտ	4500.0-11400.0	6400.0	6700.0
Վայոց Ձոր	Վայք	19700.0-36400.0	23700.0	19800.0
	Եղեգնաձոր	12300.0-59100.0	34300.0	26100.0
	Ջերմուկ	7400.0-81800.0	37600.0	24000.0
Տավուշ	Դիլիջան	18200.0-50000.0	27600.0	21100.0
	Իջևան	27300.0-72700.0	32500.0	24700.0
	Բերդ	18200.0-45400.0	22300.0	16500.0
	Նոյեմբերյան	9100.0-22700.0	13200.0	14800.0

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների տարեկան աճը կազմել է 25.6%:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3574 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 960, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2614: 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 16.9%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 3.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 22.4%-ով:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
		հունվար-սեպտեմբեր 2005թ.	հունվար-սեպտեմբեր 2004թ.
Կենտրոն	125400.0-908800.0	295000.0	251200.0
Արաբկիր	100800.0-454400.0	235200.0	195800.0
Քանաքեռ-Զեյթուն	68800.0-272600.0	142000.0	118900.0
Նորք-Մարաշ	59000.0-454400.0	172900.0	180200.0
Ավան	61500.0-363500.0	122500.0	96000.0
Էրեբունի	63900.0-227200.0	116700.0	97300.0
Շենգավիթ	59000.0-204500.0	139400.0	108600.0
Դավթաշեն	68800.0-409000.0	145100.0	120000.0
Աջափնյակ	61500.0-272600.0	137600.0	108500.0
Մալաթիա-Սեբաստիա	61500.0-409000.0	132800.0	107600.0
Նուբարաշեն	32000.0-113600.0	67500.0	42300.0
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	32000.0-908800.0	155200.0	129700.0

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում

անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 19.7%:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում գրանցված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. հունվար-սեպտեմբերին /դրամ/	Միջին գները /դրամ/	
			հունվար-սեպտեմբեր 2005թ.	հունվար-սեպտեմբեր 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	29500.0-81800.0	45900.0	46000.0
	Ապարան	12300.0-36400.0	21300.0	21200.0
	Թալին	9800.0-36400.0	20000.0	17000.0
Արարատ	Արտաշատ	24600.0-50000.0	34800.0	33800.0
	Մասիս	24600.0-68200.0	41000.0	34400.0
	Վեդի	12300.0-40900.0	26100.0	22500.0
	Արարատ	9800.0-45400.0	28000.0	21500.0
Արմավիր	Վաղարշապատ	39300.0-81800.0	66500.0	50900.0
	Արմավիր	17200.0-59100.0	40200.0	30700.0
Գեղարքունիք	Սևան	9800.0-40900.0	24700.0	20100.0
	Գավառ	9800.0-36400.0	20100.0	21800.0
	Մարտունի	9800.0-45400.0	26100.0	19500.0
	Վարդենիս	7400.0-31800.0	14400.0	11600.0
	Ճամբարակ	7400.0-22700.0	10900.0	11000.0
Լոռի	Վանաձոր	24600.0-50000.0	36700.0	38000.0
	Ստեփանավան	7400.0-36400.0	25800.0	19700.0
	Սպիտակ	9800.0-36400.0	24500.0	18300.0
	Ալավերդի	7400.0-31800.0	16200.0	14500.0
	Տաշիր	7400.0-31800.0	18000.0	12700.0
	Թումանյան	4900.0-18200.0	6300.0	5400.0
	Շամլուղ	2500.0-13600.0	4000.0	3500.0
	Ախթալա	9800.0-22700.0	11300.0	11100.0
Կոտայք	Աբովյան	34400.0-90900.0	67100.0	51600.0
	Նոր Հաճն	19700.0-68200.0	47400.0	32900.0
	Բյուրեղավան	12300.0-45400.0	31100.0	22300.0
	Եղվարդ	19700.0-63600.0	39100.0	26500.0
	Հրազդան	12300.0-40900.0	28300.0	22400.0
	Ծաղկաձոր	34400.0-68200.0	52900.0	47900.0
	Չարենցավան	12300.0-45400.0	29900.0	20100.0
Շիրակ	Գյումրի	29500.0-59100.0	43200.0	49800.0
	Արթիկ	9800.0-40900.0	21200.0	16500.0
	Մարալիկ	7400.0-36400.0	18000.0	14700.0
Սյունիք	Գորիս	9800.0-59100.0	33100.0	19000.0
	Կապան	9800.0-40900.0	25900.0	18200.0
	Միսիան	9800.0-40900.0	23500.0	17800.0

	Մեղրի	7400.0-36400.0	18800.0	15400.0
	Ագարակ	7400.0-36400.0	16400.0	15100.0
	Դաստակերտ	4900.0-18200.0	7900.0	7300.0
Վայոց Ձոր	Վայք	9800.0-36400.0	25000.0	20600.0
	Եղեգնաձոր	17200.0-59100.0	35600.0	27000.0
	Ջերմուկ	12300.0-40900.0	26300.0	23800.0
Տավուշ	Դիլիջան	9800.0-45400.0	31000.0	22700.0
	Իջևան	17200.0-45400.0	33500.0	25100.0
	Բերդ	9800.0-40900.0	23100.0	17100.0
	Նոյեմբերյան	9800.0-31800.0	14400.0	16800.0

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների տարեկան աճը կազմել է 21.2%:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 13243.81հա /այդ թվում 239.09 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 12585.46 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 12959.58 հա հողերի /այդ թվում 228.46 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 12340.00 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 41 միավոր /40.30 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր և 7 միավոր /40.30 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

Օտարված 276.38 հա /այդ թվում 6.30 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 243.52 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ 7.85 հա հողերի նկատմամբ՝ փոխանակության գործարքներ /այդ թվում 4.33 հա Երևանում/, որից 1.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 9158.31 հա, որից 9106.65 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն վարձակալության իրավունքի վաճառքի, արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>						<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	172	51.23	80	91.53	0	0.00	657	63.10	124	22.44
Արագածոտն	82	459.50	7	0.84	5	0.05	433	229.77	293	30.84	3	0.01
Արարատ	502	802.91	205	20.23	58	2.85	778	323.60	495	45.31	3	0.07
Արմավիր	841	7437.54	8	0.94	79	1.21	794	1669.11	380	35.38	12	0.97
Գեղարքունիք	18	89.60	27	3.65	4	2.25	92	49.97	69	12.22	3	0.95

Լոռի	0	0.00	2	0.54	4	0.05	226	128.53	54	7.45	9	0.09
Կոտայք	141	174.79	42	3.41	12	3.85	824	443.38	1043	130.44	16	8.56
Շիրակ	99	29.89	54	2.79	34	1.18	145	159.14	70	8.58	5	0.05
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	127	137.04	15	1.44	0	0.00
Վայոց Ձոր	107	84.38	0	0.00	17	3.72	57	48.98	26	3.29	0	0.00
Տավուշ	11	16.39	33	2.45	8	4.46	98	55.49	30	3.13	1	0.02
Ընդամենը	1801	9095.00	550	86.08	301	111.15	3574	3245.01	3132	341.18	176	33.16

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են հողերի 9583 առուվաճառքի գործարքներ /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 7603/, այդ թվում 5375-ը՝ գյուղատնտեսական նշանակության /3623/, 4160-ը՝ բնակավայրերի /3935/, 41-ը՝ արդյունաբերական օբյեկտների /41/ և 7-ը՝ հատուկ պահպանվող ստարածքների հողերի /4/ նկատմամբ:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հողերի առուվաճառքներից 2530-ը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 1655/, այդ թվում 164-ը՝ /86.82 հա/ Երևանում /359/, իսկ 2366-ը՝ /9116.77 հա/ մյուս մարզերում /1296/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 1789 միավորը /9044.28 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական նշանակության /2004թ նույն ժամանակամիջոցում՝ 482/, 508-ը՝ /80.40 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /1061/, 213-ը՝ /54.78 հա/ հասարակական կառուցապատման /103/, 20-ը՝ /24.13 հա/ արդյունաբերական օբյեկտների /6/ հողեր:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 1 գործարք:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրված 5375 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 1789-ը իրականացվել են աճուրդների, 74-ը՝ դատարանի վճիռների և 12-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	80	443.50	22.5	1243.7	229.5	351	109.92	393.4	6816.0	1778.0
Ապարան						14	6.43	98.3	772.5	292.2
Թային						57	88.35	98.3	763.4	228.7
Ծաղկահովիտ						11	25.07	83.6	954.2	128.5
Արարատի մարզ										
Արտաշատ	257	244.66	9.5	13750.1	1186.0	346	125.40	363.9	5452.8	1076.9
Մասիս	102	159.01	27.0	5000.7	457.7	198	72.17	196.7	6816.0	1164.5
Վեդի	140	366.55	19.9	2557.5	562.4	214	121.35	221.3	4544.0	732.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	236	419.49	8.9	16487.2	402.5	310	516.73	319.6	4089.6	661.3
Բաղրամյան	332	6613.31	15.7	595.3	117.5	158	975.95	98.3	681.6	368.4

Վաղարշապատ	273	404.75	11.4	8179.5	507.7	321	174.58	481.9	9088.0	1102.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	0.27	206.5	499.8	298.4
Ճամբարակ	18	89.60	123.0	949.7	331.6	11	8.41	49.2	545.3	110.5
Մարտունի						59	10.51	49.2	1817.6	405.0
Սևան						1	0.10	49.2	454.4	176.8
Վարդենիս						20	30.68	29.5	536.2	146.3
Լոռու մարզ										
Այվերդի						42	17.89	177.0	2499.2	369.0
Գուգարք						39	12.56	245.9	2726.4	845.5
Սպիտակ						11	3.63	245.9	1499.5	469.6
Ստեփանավան						44	34.03	88.5	2272.0	247.0
Տաշիր						53	35.73	49.2	454.4	153.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	3	3.57	44.9	525.3	338.5	389	100.08	295.0	11360.0	2609.3
Եղվարդ	10	27.60	138.8	770.4	349.9	351	294.08	186.8	11360.0	1795.7
Հրազդան	128	143.62	81.7	1360.5	350.3	79	47.44	122.9	2726.4	571.7
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.02	1650.2	1650.2	1650.2	69	71.65	270.4	1704.0	345.2
Ամասիա						9	20.39	39.3	238.6	85.0
Անի						23	20.08	118.0	363.5	169.5
Աշոցք						20	25.92	29.5	113.6	88.1
Արթիկ	91	27.83	154.5	1319.7	489.0	24	21.09	68.8	1090.6	137.1
Սյունիքի մարզ										
Գորիս						25	14.23	98.3	727.0	272.2
Կապան						15	10.13	59.0	908.8	200.9
Մեղրի						11	1.69	196.7	1926.7	404.8
Սիսիան						70	109.32	44.3	681.6	161.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	94	59.61	61.5	361.4	212.5	31	19.10	127.8	2726.4	1154.4
Վայք	13	24.77	116.8	1081.1	266.5	25	29.73	59.0	1545.0	449.7
Տավուշի մարզ										
Բերդ						28	9.06	49.2	908.8	309.0
Իջևան	11	16.39	316.7	520.3	399.3	16	8.85	260.6	1817.6	724.7
Նոյեմբերյան						54	37.58	49.2	3789.7	361.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 2853 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 375-ը իրականացվել են աճուրդների, 3-ը՝ ուղղակի վաճառքների և 23-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										

Աշտարակ	7	8400.0	36.0	143.9	116.7	273	277879.0	122.9	3635.2	1822.1
Ապարան						8	10740.0	122.9	636.2	157.6
Թալին						10	16615.0	49.2	363.5	66.8
Ծաղկահովիտ								49.2	363.5	64.3
Արարատի մարզ										
Արտաշատ	97	105611.0	37.7	509.6	226.8	91	103030.6	147.5	2726.4	660.6
Մասիս	81	68217.0	240.5	1897.0	460.4	327	272153.0	147.5	9088.0	794.9
Վեդի	26	28300.0	46.7	263.1	143.7	75	75686.0	122.9	999.7	470.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	7	9200.0	92.2	159.0	149.8	96	119652.8	147.5	2272.0	727.2
Բաղրամյան						5	5400.0	88.5	272.6	105.6
Վաղարշապատ	1	1027.7	1027.7	1027.7	983.8	276	226445.0	147.5	4544.0	1070.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						18	19410.5	147.5	908.8	297.7
Ճամբարակ	20	28750.0	18.7	154.5	108.2	1	571.0	49.2	136.3	73.5
Մարտունի	4	4000.0	57.6	115.2	85.5	25	31990.0	98.3	454.4	137.0
Սևան	3	3720.0	113.5	347.1	229.6	4	9480.0	98.3	908.8	119.4
Վարդենիս						21	60785.0	49.2	227.2	59.1
Լոռու մարզ										
Այվերդի						3	5270.0	73.8	272.6	96.4
Գուգարք						34	44923.0	73.8	2362.9	428.5
Սյիտակ						8	11960.0	68.8	454.4	94.8
Ստեփանավան	1	5000.0	39.3	39.3	39.3	3	2654.0	49.2	272.6	73.5
Տաշիր						1	1130.0	49.2	136.3	62.0
Կոտայքի մարզ										
Արբիլյան	18	14500.0	120.2	1402.1	718.1	441	407380.0	147.5	6816.0	1303.6
Եղվարդ	2	2000.0	138.8	138.8	138.8	508	793148.0	147.5	6816.0	1426.7
Հրազդան	22	17589.0	4750.0	4752.2	4751.2	87	97384.0	147.5	9088.0	909.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	20	7874.0	175.2	1679.0	677.3	54	63234.7	122.9	1545.0	242.0
Ամասիա								49.2	136.3	62.0
Անի						3	5360.0	73.8	181.8	84.9
Աշոցք						1	5050.0	44.3	136.3	55.1
Արթիկ	33	19656.0	38.6	899.7	334.5	11	11484.0	73.8	931.5	111.0
Սյունիքի մարզ										
Գորիս						9	10114.0	73.8	545.3	193.2
Կապան						1	361.0	73.8	636.2	188.2
Մեղրի						1	630.0	73.8	409.0	105.6
Սիսիան						3	2932.0	73.8	409.0	119.4
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						23	27264.0	73.8	1136.0	193.6
Վայք						2	3330.0	83.6	636.2	103.3
Տավուշի մարզ										
Բերդ								49.2	636.2	78.1
Իջևան	33	24509.0	98.3	260.4	209.8	27	29144.0	73.8	1363.2	306.4
Նոյեմբերյան						2	1420.0	49.2	636.2	96.4

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 86 գործարքներ 37.95 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ Արագածոտնի /10.51հա/, 62-ը՝ Արարատի /18.39հա/, 1-ը՝ Արմավիրի /0.12 հա/, 1-ը՝ Լոռվա /1.10 հա/, 8-ը՝ Շիրակի /6.57 հա/, 4-ը՝ Սյունիքի /0.69 հա/, 1-ը՝ Կոտայքի /0.17հա/ և 2 -ը՝ Տավուշի /0.39 հա/ մարզերում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8460 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.2%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 24.0%-ն իրավաբանական անձանց

կողմից: 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 25.0%-ով:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 381 բնակարանների, 162 բնակելի տների, 2050 հասարակական, 191 արտադրական նշանակության օբյեկտների, 26 ավտոտնակների և 5650 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 289 վարձակալության գործարքների քանակները 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազել են 33.4%-ով:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալվել են 27542.22 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 110.75 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 26152.71 հա կազմում են գյուղատնտեսական /որից 1589.89 հա նախկին պահուստային/, 741.19 հա բնակավայրերի, 222.85 հա արդյունաբերական օբյեկտների, 40.25 հա էներգետիկայի օբյեկտների, 14.15 հա անտառային, 69.73 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 5.88 հա տրանսպորտի օբյեկտների, 3.26 հա ջրային, 181.45 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Կոտայքի մարզում՝ 6859.48 հա, որից 6775.81 հա գյուղատնտեսական նշանակության: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 462.35 հա, որից 448.95 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 15702.43 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	7	1148.80	485	1626.18
Արարատ	43	3899.03	216	1623.36
Արմավիր	0	0.00	59	1134.06
Գեղարքունիք	73	1435.70	258	1217.77
Լոռի	4	188.30	264	681.16
Կոտայք	63	5979.00	382	796.81
Շիրակ	12	1222.00	512	1910.32
Սյունիք	12	1254.0	158	990.06
Վայոց Ձոր	2	75.60	172	373.35
Տավուշ	25	500.00	49	97.20
Ընդամենը	241	15702.43	2555	10450.27

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6465 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 23.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 37.9%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /44.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.8%/, առանձնատների /16.1%/ և հողերի /13.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3319 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 21.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 2183.43 հա մակերեսով հողեր /այդ թվում՝ 18.10 հա Երևանում/, որից 2152.84 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1563.06 հա, որից 1561.95 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 175 և 67 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 15.7%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Շիրակի մարզում /24.4%:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2005թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 14987 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2004թ. նույն ժամանակամիջոցի համեմատ աճել է 25.4%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /48.0%/: Առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն